կողմում Կուր գետի եզերքին՝ այժմ Փիրաս։ Ճաթառ յետոյ Փաթար, որոյ անունով կայ այժմ մի գեղ Պարսից վրանաբնակ Սալեանի մօտերին։

Մին՝ Ջաւաթ գաւառում Մուղանու դաշտում Երասխի և Կուրի խառնուրդի մօտ։

Իսկ այժմեան քաղաքներն են՝ 1). Շամախի, որ Շամախ-Ճաթ Չերքէզների թագաւորի հիմնածն է, 2). Բագու Կասպից ծովեզերքին՝ կրակապաշտութեան Բագնեաց անունովն շինուած, որոյ մօտ է Աւշերօնեան թերակղզու վերայ եղած ինքնավառ կրակարաններն և կրակոտ երկիրն (Բալախանի և Սուրախանի). զոր Վաչական Աղուանից թագաւորն յամի Տեառն 500, ընծայել էր օժիտ իւր Վարսենիկ աղջկան. 3) Ղուբայ լեռնային և անտառապատ քաղաք։

4) Դարբանդ՝ Կասպից ծովի եզերքին, որը իւր ամուր և հաստ պարիսպներովը՝ որ լեռան բարձրութիւնից հետզհետէ իջնելով հասել է ծովը և բաւական գնացել է ծովի մէջը, ինչպէս պարսպի հետքերը երեւում են ծովի միջին. յիշեցնում է հին անուններն Երկաթի դուռն, դուռն Հոնաց, դուռն Ալանաց, դուռն Ճորա, եւայլն։

Աղուանից աշխարհի մէջ Աղուանից գրով արձանագրութիւն կամ ուրիշ գրուածք չ'լինելը թէ և զարմացնում է հետաքրքրողին և ինձ, բայց որում եթէ Լանկ Թամուրը բոլոր ձեռագրերը տարաւ Սմրղանդ գրադարան պատրաստելու համար (ապա թէ ոչ, բոլորը կամ կայրէր և կամ Կասպից ծովը կը ձգէր). արձանաքարերն ինչ եղան, մի՞թէ Աղուանք արձանաքարերն եւս հանեցին վանքերից, եկեղեցիներից, բերդերից և ամէն տեղից և իրենց հետ տարին Նոր-Աղուանստան, Բուխարա, Հէրաթ, եւայլն։ Բայց երբոր յիշում ենք Աղուանից ազգի համար մեր Մովսէս Խորենացու գրած բառերը, որ ասում է «Մեսրովբ թարգմանիչը Աղուանից Արսվաղէն թագաւորի և Երեմիա Եպիսկոպոսապետի (Կաթուղիկոսի) խնդրանօք առեղծեց Աղուանից համար նոյա կոկորդային, կոշտ, բիրտ և անհարթ Գարգարացի լեզուի նշանագրերը", եւայլն։ Իսկոյն մակաբերում ենք, որ Աղուանք այդ շնորհուած գրերը երկար ժամանակ չէին կա-